տակը տանել կամ շուռ տալ, բայց ի զուր. ապա մոլեգնու-թեամբ ջրից շատ բարձր է թռչում և հէնց այս վայրկեանին նրա բանը վերջանում է. շարս կողմից դանակներ են խրուում նրա մարմնի մէջ։ Երկար կռուից, վէրքերից և արիւնաքամ լի-նելուց բոլորովին ուժասպառ եղած և թուլացած տափաձուկը վայր է ընկնում ջրի մէջ. ապա նրան հանում են ծովափը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՐԲՈՒՄՆ.

Մայր Աթոռից օրդան «Արարատ» ամսագրի 1901 թ. համարում մի պաշտօնական գրութիւն էր զետեղուած իբրև հրահանգ երեցփոխանների համար։ Հրահանգ հրատարակելու առիթը եղել է իմ 1901 թ. Մայիսի 23-ի № 17 Տփխիսի Հայոց Կոնսիստորիային ուղղած գրութիւնս, որոյ մասին յի-շատակութիւն անգամ չկայ։ Տփխիսի Կոնսիստորիայն մեղա-դրում է ինձ, որ ես Մողնուոյ եկեղ. մի միաբան քահանայի համար 130 ռբլ. մի շուրջառ եմ կարել, իսկ միւս միաբանի համար որպէս թէ պրացել եմ 12 ռբլ. ծախսել։ Տփխիսի Կոնսիստորիայն, հիմնուելով Եպիկիոս և սուրբ Սահակի ժողով-ների կանոնների վրայ՝ հետևցնում է, որ ես իբրև երեցփո-խան յայտնի ծախսեր անելու համար պիտի հրահանգուէի յիշեալ ժողովների կանոններով։ Այն յենարանը, որի վրայ հաստատուած են Կոնսիստորիայի եզրակացութիւնները, խա-խուտ է, բոլորովին և իսկապէս յենարան չէ այլ ևս։ Կոնսիստո-ռիայն յայտնի է, որ պատմական ընթացքով յիշեալ ժողով-ների կանոններին փոխարինել են նոր կանոններ. Կոնսիստո-ռիայն քաջ գիտէ—վերև յիշած ժողովների կանոններն ամ-փոփուած են վերջին ժամանակներս հրատարակուած կանոն-ների մէջ, որը Պոլոժէնիա է կոչուում, որի կանոնների կատա-ռումը նոյն Կոնսիստորիայն ի պահանջել հարկին զէնք է ընդ-ունում՝ խստիւ պահանջելով երեցփոխաններից նրա իրա-գործումը, և որից նա ինքը հետևաբար խուսափելու իրաւունք

չունի—և այս ամենը գիտենալով հանդերձ՝ նա գիտակցօրէն անգիտութեան է տալիս իրան։

Սա տարբերան կանոն է, որ երբ նոր կանոններ են հրատարակում, հինը կորցնում է իւր նշանակութիւնը և դառնում պատմութեան նիւթ։ Սակայն Տփխիսի Կոնսիստորիայն, երբ ձեռնտու է իրան, պոլոժէնիայի կանոնները է յենարան ընդունում, երբ ձեռնտու չէ, Նիկիոյ կանոններն է արխիւից հանում։

Իբրև պատասխան ես բաւական եմ համարում գնել այստեղ իմ պատասխանը Տփխիսի Հայոց Կոնսիստորիային, որից ընթերցողը կնկատէ, որ ես գործել եմ, որովհետև իրաւունք ունէի. դա իմ իրաւունքն է եղել.—օրինապանցներին լաւ կլինի Կոնսիստորիայի մէջ և նրա սահմաններում որոնել։

Ի Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Վրաստանի եւ Իմերեթի

Մողնուոյ երեցփոխան գեներալ-մայոր իշխ. Ա. Բէհբութեանից

Ստացայ Ամենիդ ի 15 Մարտի 1901 թ. № 1078 շրջաբերականը տպագրուած, ուր յիշատակուած են բազմաթիւ օրէնքներ և յօդուածներ, որոնք ընդգծուած նպատակին չծառայելուց զատ՝ ոչինչ եղրակացութեան չեն յանգում։ Այդ յօդուածների մէջ ուշադրութեան արժանի է 1896 թ. XI հ. 1223 յօդ., որով Ամենը աշխատում է բացատրել, թէ ես օրինապանց եմ գտնուած դէպի իմ պարտականութիւնը։ Օրէնքի թէ այդ և թէ միւս յօդուածների ուղիղ ըմբռնման վերաբերութեամբ՝ անհրաժեշտ եմ համարում հետևեալը յայտնելու։

Ա. Օրինաց I հատոր I մաս 65 յօդ. (1897 թ. տպագրած) պատուիրում է օրէնքը կատարել ճշտիւ, ըստ մտաց և ըստ տառականութեան առանց փոփոխութեան և մեկնաբանութեան։

(Законы должны быть исполняемы по точному и буквальному смыслу оныхъ, безъ всякаго измѣненія или рас-

пространенія. Сводъ законовъ Россійской Имперіи. Томъ I. часть I. ст. 65. изданіе 1897 г.)

Բ. 72 յօդ. Հին օրէնքը իւր ոյժը պահպանում է, քանի որ նորը չէ հրատարակուած կամ փոփոխութեան ենթարկած։

(Законы сохраняютъ свое дѣйствіе, доколѣ не будетъ отмѣненъ силою новаго закона, ст. 72.)

Գ. I. հ. I մ. 73 յօդ. (1897 թ. հրատարակուած) պատուիրում է՝ գոյութիւն ունեցող օրէնքը, ինչ ճանապարհով որ տուել է իշխանութիւնը, նոյն ճանապարհով և նոյն ձևով էլ պիտի վերացնէ նոյն իշխանութիւնը։

(Отмѣна закона существующаго совершается тѣмъ-же порядкомъ, какой означенъ для составленія законовъ, ст. 73.)

Ուրեմն քանի որ 1229 յօդ. փոխուած չէ օրէնք հրատարակողի կողմից, ես իրաւունք չեմ համարում ինձ լսելու որևէ աւելորդ մեկնութիւն ում և իցէ կողմից, որպէս զի օրինաւանչ չգտնուիմ։

Իսկ ինչ վերաբերում է Նիկիական ժողովի, սուրբ Սահակի, Մխիթար Գօշի և այլոց կանոններին, այստեղ ես յարմար չեմ համարում այդ մասին կարծիք յայտնելու առ այժմ։

Մարտի 15-ի 1901 թ. № 1078 շրջաբերականով (մակդրած «Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան....) Ատեանը կամենում է պետական օրինաց 1219 յօդ. փոխել՝ աւելորդ մեկնութիւններ տալով։ Այդ մասին ես վստահանում եմ կարծել, որ դա վեր է մի ստորադրեալ իշխանութեան կողմից դէպի բարձրագոյն իշխանութիւնը։ Եթէ Ատեանդ իմ այս յայտարարութիւնը լսելուց յետոյ՝ չի կամենայ փոխել № 1078 տպագրած շրջաբերականը, յայն դէպս խնդրում եմ իմ բացատրութիւնը (իսկականը և ոչ պատճէնը) ի 15-ն Մարտի 1901 թ. № 1078 տպագրած շրջաբերականի հետ միասին՝ Ատենիդ կարծիքով հանդերձ ուղարկել Էջմիածնի Սինոդի պրոկուրորին ի տնօրէնութիւն՝ նորանից որոշում լսելու։ Խոնարհաբար խնդրում եմ յայտնել ինձ Ատենիդ կարգադրութիւնը սոյն գրութեան մասին։

1901 թ. 23 Մայիսի Տփխիս № 17.

Երեցփոխ՝ Իշխ. Ա. Բեհբութեանց